«Կիսիր գինու օրերն ընկերներիդ հետ» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Ներածություն

1.1 Գովազդային վիճակախաղի կազմակերպիչն է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.2 Մասնակցելով գովազդային վիճակախաղին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.3 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Իրականացվող Գովազդային վիճակախաղի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է Կազմակերպչի պաշտոնական Ինստագրամ էջում՝ հրապարակման միջոցով:

2.2 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Գովազդային վիճակախաղի 2.1 կետում նշված հարթակում:

2.3 Գովազդային վիճակախաղին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:

2.4 Կազմակերպիչն իրավունք ունի կապ հաստատել հաղթող մասնակցի հետ և ստուգել նրա իսկությունը: Եթե մասնակիցը չի պատասխանում, հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների մեջ կա տվյալների անհամապատասխանություն, ապա նրա մասնակցությունը կարող է չեղյալ համարվել:

2.5 Մասնակցի մասնակցությունը կարող է չեղյալ համարվել նաև այն դեպքում, երբ Գովազդային վիճակախաղի ամփոփման ժամանակ՝ 2025 թ. հունիսի 2-ից մինչև հունիսի 3-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում կատարած չլինի Գովազդային վիճակախաղի 3.1 կետում նշված պայմաններից որևէ մեկը:

2.6 Գովազդային վիճակախաղին կարող են մասնակցել միայն իրական անձնական էջերը՝ անուն, ազգանուն և լուսանկարով: Կեղծ տվյալներով էջերի մասնակցությունը կչեղարկվի:

3. Մասնակցության պայմաններ

3.1 Գովազդային վիճակախաղին մասնակցության հնարավորություն կտրվի 2025թ. մայիսի 21-ից մինչև 2025թ. հունիսի 1-ը ներառյալ հետևյալ պայմանները կատարած մասնակիցներին.

- Հետևել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Տելեգրամի պաշտոնական ալիքին (այսուհետ՝ Տելեգրամ ալիք)՝ ծանոթանալով Ակբա բանկի կողմից մատուցվող ծառայություններին՝ www.acba.am պաշտոնական կայքում,
- Հետևել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Ինստագրամի պաշտոնական էջին (այսուհետ՝ Ինստագրամի էջ)՝ ծանոթանալով Ակբա բանկի կողմից մատուցվող ծառայություններին՝ www.acba.am պաշտոնական կայքում,
- Տարածել Ինստագրամում գովազդային վիճակախաղի հրապարակումը սթորի բաժնում, նշելով Ակբա բանկի Ինստագրամի պաշտոնական էջը,
- Ինստագրամի էջում նշված հրապարակման մեկնաբանություններում նշել ինստագրամյան այն ընկերոջը ում մասնակիցը ցանկանում է նվիրել մրցանակը և հավանել հրապարակումը։

3.2 Պատահականության սկզբունքով կընտրվի հինգ հաղթող մասնակից (այսուհետ՝ Հաղթող), որոնց կտրամադրվի երկուական «Գինին Վայելելու Փաթեթ»-ի QR կոդ, որով, մոտենալով «Երևանի Գինու Օրեր» փառատոնի կազմակերպիչ ԷվենտՏուրայի տաղավարներին, կկարողանան ստանալ «Գինին Վայելելու Փաթեթը» (այսուհետ՝ Պարգևատրում)։

3.3 Պարգևատրումը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ։

3.4 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Պարգևատրման որակի համար։

3.5 Գովազդային վիճակախաղի հաղթողը կորոշվի պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով՝ ըստ Կազմակերպչի հայեցողության։

3.6 Գովազդային վիճակախաղի արդյունքների ամփոփումը տեղի կունենա 2025թ. հունիսի 2-ից մինչև հունիսի 3-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում Տելեգրամ ալիքի Գովազդային վիճակախաղի մասին հրապարակման մեկնաբանության բաժնում՝ էկրանի տեսագրության միջոցով։

3.7 Վիճակախաղի ընթացքում յուրաքանչյուր մասնակից՝ անկախ իր մեկնաբանությունների քանակից, կարող է շահել միայն մեկ Պարգևատրում։

3.8 Պարգևատրումը Կազմակերպչի կողմից Հաղթողին կարող է տրամադրվել մինչև 2025թ.-ի հունիսի 8-ը (ներառյալ)։

3.9 Կազմակերպչի, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ, «ԱԿԲԱ-ԱՄՈՒՆԴԻ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ ԵՎ «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ աշխատակիցները չեն կարող հանդիսանալ Պայմանների 3.1 կետում նշված Վիճակախաղի հաղթող և չեն կարող ստանալ Պարգևատրումը այլ մասնակցի կողմից Վիճակախաղում հաղթելու դեպքում։

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.acba.am կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով։